ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4567-Ա «17» սեպտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի Հ.4346-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով քաղաքացի Մաքսիմ Ստեփանյանի՝ ի դեմս ներկայացուցչի 06.07.2026թ. հ.Դ-70140-26 դիմումը.

1. Երևանի քաղաքապետի 2025 թվականի հոկտեմբերի 24-ի «Ինքնակամ կառույցի օրինականացման մասին» հ.4346-Ա որոշման 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4.Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետին՝ հիմք ընդունելով Երևան քաղաքի բյուջեի հ.900015211262 և գանձապետական հ.900015211254 հաշիվներին 03.07.2026թ. մուտքագրված համապատասխանաբար 511999 (հինգ հարյուր տասնմեկ հազար ինը հարյուր իննսունինը) դրամ և 6596818 (վեց միլիոն հինգ հարյուր իննսունվեց հազար ութ հարյուր տասնութ) դրամ գումարները վճարված լինելու հանգամանքը, 30-օրյա ժամկետում Մաքսիմ Ստեփանյանի հետ կնքել կառույցի և դրա համար առանձնացված հողամասի ուղղակի վաճառքի պայմանագիր:»:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

4. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ